Արձանագրություն N 4

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «դեկտեմբերի» 2018թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝,
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Ղարիբյան

1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածում (Հավելված 3) հավելվածի համարը սխալ է նշված, **2-րդ չափաբաժնի մասով** առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում հստակ չի երևում ապրանքի նոր,չօգտագործված լինելու,հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները: **5-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր,չօգտագործված լինելու,հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները,ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելը: **17-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր, չօգտագործված լինելու, հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները,ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելը: **26-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր, չօգտագործված լինելու, հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները,ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելը: **27- րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր, չօգտագործված լինելու, հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները,ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելը,վերջին նախադասությունը արդյոք կապ ունի մեր հրավերի համապատասխան չափաբաժնի հետ,թե ոչ:

բ) «Մեդպրո» ՍՊԸ-ն չի ներկայացրել «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ հավելվածը: **3- րդ չափաբաժնի մասով** բացակայում է ապրանքի նոր, չօգտագործված լինելու, հանձնելու պահին պիտանելիության առնվազն 70% -ի առկայության հանգամանքները,ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելը:

գ) «Ա.Կոստանյան և ընկերներ» ՍՊ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում **4-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր, չօգտագործված լինելու, պիտանելիության ժամկետի, ցանկված մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելու հանգամանքները:

դ) «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում **9-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր,չօգտագործված լինելու հանգամանքը:

ե) «Մարիյա մեդ Քօ» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող 147.060 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ,

զ) «Մարգ ֆարմացիա» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում **21-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում ապրանքի նոր,չօգտագործված լինելու հանգամանքը:

է) «Երմեդ» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում **24-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում պիտանելիության ժամկետի, ցանկված մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելու հանգամանքները,լարի երկարությունը հստակ նշված չէ:

ը) «Փինք Ֆլամինգո Գ և Ա կենտրոն» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում **28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ չափաբաժնի մասով** հստակ չի երևում պիտանելիության ժամկետի, ցանկված մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության ւ հանգամանքները:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ նույն օրը համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ դրույթներով՝ մերժել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը 18-րդ, 19-րդ, 34-րդ չափաբաժինների մասով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 18, 19 չափաբաժինների մասով չկան բավարար հայտ ներկայացրած մասնակիցներ, վերոնշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած, ծանուցել 34-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած «Կուրացիո» ՍՊԸ-ին՝ ներկայացնելու որակավորման փաստաթղթեր:

4. N 6, 7, 8 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Կուրացիո» ՍՊ ընկերությանը, N 10, 12 չափաբաժինների մասով՝ «Մի Վնասիր» ՍՊ ընկերությանը, N 20 չափաբաժնի մասով՝ «Ար-Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Կուրացիո» ՍՊ, «Մի Վնասիր» ՍՊ և «Ար-Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունների հետ կնքվելու են գնման պայմանագրեր:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Լ.Դանիելյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Է.Միրոյան**
(ստորագրությունը)

_____ **Կ.Մկրտչյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Մ. Ղարիբյան**
(ստորագրությունը)